ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Բեգինյանի և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության իրավաբանական բաժնի պետ Գոհար Մկրտչյանին Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ *Դավիթ Բեգինյան, Գոհար Մկրտչյան:*

Գործուղված պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնը՝ *ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության իրավաբանական բաժնի պետ:*

Գործուղման վայրը և ժամկետները՝ *Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ), 2019 թվականի նոյեմբերի 27-ից նոյեմբերի 30-ը:*

Հրավիրող կողմը՝ *Դատական կատարողների միջազգային միություն (այսուհետ Միություն)*

Գործուղման նպատակը՝ *մասնակցելու՝ Միության մշտական խորհրդի լիագումար նիստին:*

Քննարկված թեմաներ՝ *նիստի օրակարգում ընդգրկված էր 34 հարց, այդ թվում՝*

1. Թվով հինգ երկրների համանման կառույցների Միությանը անդամակցելու վերաբերյալ քվեարկություն,

2. ՌԴ դատական պրիստավների դաշնային ծառայության տնօրեն-ՌԴ գլխավոր դատական պրիստավ Դմիտրի Արիստովի՝ որպես Միության խորհրդի անդամ ընտրվելու վերաբերյալ հարցի քննարկում,

3. Ռուսաստանի Դաշնության դատական պրիստավների դաշնային ծառայության և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև համագործակցության հուշագրի ստորագրում,

4. Միության կողմից 2019թ. գործունեության, այդ թվում՝ Ֆինանսական հաշվետվության ներկայացում,

5. Միության Կանոնադրության մի շարք հոդվածների վերանայման մասին նախագծի քննարկում,

6. Հարկադիր կատարողների նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերը և դրանք կանխելու ուղիների վերաբերյալ քննարկում,

7. Թվային ակտիվների (կրիպտոարժույթների) վրա բռնագանձում տարածելու անհրաժեշտություն և այլ գործառույթային հարցեր:

Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Բեգինյանը առանձին հանդիպում է ունեցել Դատական կատարողների միջազգային միության նախագահ Մարկ Շմիցի, Ռուսաստանի, Վրաստանի, Լիտվայի, Չեխիայի և Կոսովոյի պատվիրակությունների ղեկավարների հետ:

Միության նիստի ընթացքում Ծառայության իրավաբանական բաժնի պետ Գ. Մկրտչյանը հանդես է եկել ելույթով և ներկայացրել է կատարողական վարույթի ընթացքում կողմերի ծանուցման վերաբերյալ Ծառայության փորձը և ներպետական օրենսդրությունը, մասնավորապես՝ շեշտադրելով էլեկտրոնային եղանակով կողմերին ծանուցման կարգը և դեպքերը՝ անդրադառնալով նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով ծանուցումների ընթացակարգին:

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ

X _____

Դ. ԲԵԳԻՆՅԱՆ